Պարույր Սևակ

Երգ Մոսկվայի մասին

Մոսկվա՛... Եվ չե՞ն ճարվում այն բառերը, որով
Պիտի հյուսվի երգը նրա մասին.
Ե՛րգ, որ արյուն դառնա, մարդկանց երակներով
Արյան նման խայտա, արյան նման հոսի:
Ե՛րգ, որ ծանոթ լինի մանկութ երգի նման,
Եվ նոր լինի ու թարմ՝ ինչպես գարուն.
Ե՛րգ, որ հուզի, ինչպես հեռվից եկող նամակ,
Եվ կարկաչի՝ ինչպես հայրենի տան առուն:
Որ չլինի նման այն երգերին, որտեղ
Խինդի փրփուրի տակ հուզման գետն է կորչում:
...Սակայն դու էլ, իմ սի՛րտ, այդ դու էլ ես հորդել...
Չկրկնված նոր ե՞րգ... Դու իզո՛ւր ես փորձում:
Հիմա ես հասկանում եմ. հապա ինչպե՞ս իրար
Չնմանվեն երգերն այս քաղաքի մասին,
Երբ նույն այս հուզմունքն է պատել նաև նրանց,
Ինչպես որ քեզ պատեց ահավասիկ:
...Երգն է տուժում գուցե, բայց շահում է Մոսկվան,
Որի անունը հենց, եթե կուզեք,
Հենց այդ չգրվա՛ծ դեռ, չեղա՛ծ երգի նման
Համայն աշխարհին է կարողանում հուզել:

23.XI.1951թ.

Մոսկվա